ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«10» մայիսի 2019 թվականի № 100-Ա

«ՍՎ ՋՈՒՐ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «ՍՎ ՋՈՒՐ» ՍՊ ընկերության 2019 թվականի ապրիլի 4-ին ներկայացված թիվ 12 վարչական բողոքը և հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի ապրիլի 9-ի թիվ 77-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները՝

ՊԱՐԶԵՑ

1. **<u>Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.</u>**

«ՍՎ ՋՈՒՐ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2019 թվականի ապրիլի 4-ի ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին (այսուհետ՝ Նախարար) ուղղված թիվ 12 գրությամբ խնդրել է ամբողջությամբ անվավեր ճանաչել Նախարարի 2019 թվականի մարտի 7-ի թիվ 01 ԳԲ/ 29.2ԱԱ/1396-19 գրությամբ՝ «ՍՎ ՋՈՒՐ» ՍՊ ընկերությանը ՀՀ Կոտայքի մարզի Արզնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքի օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի տրամադրման մերժումը, ինչպես նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2019 թվականի հունվարի 1-ի թիվ ԲՓ-5 Պետական փորձաքննական եզրակացությունը համարել դրական:

Ընկերությունը իր կողմից ներկայացված բողոքում նշել է, որ 2018թ-ի սեպտեմբերի 13-ին «ՍՎ ՋՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից դիմում է ներկայացվել ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն՝ (այսուհետ՝ Նախարարություն) Արզնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/64 հորատանցքից շշալցման նպատակով հանքային ջրի արդյունահանման թույլտվություն ստանալու նպատակով:

2018 թվականի սեպտեմբերի 19-ին Նախարարության կողմից ՀՀ բնապահպանության նախարարություն է ուղարկվել «ՍՎ ՋՈՒՐ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած շրջակա միջավայրի ազդեցության գնահատման հաշվետվությունը (այսուհետ՝ ՇՄԱԳ):

ՀՀ բնապահպանության նախարարությունը 2019 թվականի հունվարի 24-ին ներկայացրել է ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ բացասական եզրակացություն, որից ելնելով

Նախարարությունը 2019 թվականի մարտի 7-ին թիվ 01 ԳԲ/ 29 2ԱԱ/1396-19 գրությամբ մերժել է Ընկերության ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը:

Ընկերության կողմից նշվել է, որ ՇՄԱԳ փորձաքննական եզրակացության հիմք հանդիսացող որևէ փաստարկ իրականությանը չի համապատասխանում և կանխամտածված կերպով արվել է ծրագրված՝ ձեռնարկատիրական գործունեության իրականացումը խոչընդոտելու նպատակով:

Մասնավորապես եզրակացության մեջ նշվել է, որ համաձայն հաշվետվության հանքային ջուրը վերցվում է 6/64 հորատանցքից, իսկ հանքավայրում ածխաթթու գազի կորզման համար նախատեսված է 1/62 հորատանցքը: Բացակայում է 1/62 հորատանցքից ածխաթթու գազի արդյունահանման նախագծային լուծումները և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը, մինչդեռ Ընկերությունը ածխաթթու գազի արդյունահանման ծրագիր և նպատակ չունի և չի ունեցել, առավել ևս նման թույլտվություն ստանալու դիմում չի ներկայացրել:

Դեռ ավելին, եզրակացության 13-րդ կետում նշվել է, որ «ՎԻ Ընդ ԷՅ ՏՈՒՐ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ բնապահպանության նախարարություն ներկայացրած գրության համաձայն, Արզնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի սանիտարական պահպանման գոտին վարձակալական հիմունքներով պատկանում է «ՎԻ Ընդ ԷՅ ՏՈՒՐ» ՍՊ ընկերությանը և բացակայում է վերջինիս համաձայնությունը Ընկերության կողմից նշված տարածքում գործունեություն իրականացնելու համար, մինչդեռ 2017 թվականի հուլիսի 12-ին «ՎԻ Ընդ ԷՅ ՏՈՒՐ» ՍՊ ընկերության ընդերքօգտագործման իրավունքը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի դրույթների ուժով դադարեցվել է, հետևաբար և դադարեցվել է հատկացված հողամասի նկատմամբ ընդերքօգտագործողի իրավունքները:

Ընկերությունը ներկայացված բողոքում հայտնում է, որ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման մերժումը տեղի է ունեցել ՀՀ օրենքների կոպիտ խախտումների և սխալ մեկնաբանման արդյունքում և ենթակա է անվավեր ճանաչման:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69, 70 և 71 - րդ հոդվածների պահանջներով Ընկերությունը խնդրել է ամբողջությամբ անվավեր ճանաչել Նախարարի 2019 թվականի մարտի 7-ի թիվ 01 ԳԲ/29 2ԱԱ/1396-19 գրությամբ՝ «ՍՎ ՋՈՒՐ» ՍՊ ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման մերժումը, ինչպես նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2019 թվականի հունվարի 1-ի թիվ ԲՓ-5 Պետական փորձաքննական եզրակացությունը համարել դրական:

2. **<u>«ՍՎ ՋՈՒՐ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը.</u>**

Ընկերության ներկայացուցիչը 2019 թվականի մայիսի 6-ին վարչական վարույթի շրջանակներում ներկայացրել է «ՍՎ ՋՈՒՐ» ՍՊ ընկերության դիրքորոշումը, նշելով որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով օրենսդրական ակտերը կարող են ունենալ ընդհանուր և հատուկ մասեր: Տվյալ դեպքում օրենսդրական ակտի ընդհանուր մասը կազմող նորմերը նախորդում են հատուկ մասը կազմող նորմերին: Ընդհանուր և հատուկ մասերում ընդգրկվում են օրենսդրական ակտի բովանդակությամբ համասեռ գլուխները, բաժինները: Ընդհանուր և հատուկ մասերը չեն համարակալվում: Ընդհանուր և հատուկ մասերի վերնագրերն են համապատասխանաբար՝ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ» և «ՀԱՏՈՒԿ ՄԱՍ»: Վերոգրյալից հետևում է, որ Ընդերքի մասին և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» ՀՀ օրենքները չունեն ոչ ընդհանուր, ոչ հատուկ մաս, հետևաբար տվյալ պարագայում պետք է առաջնորդվել «Նորմատիվ

իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ մասի պահանջներով և նախապատվությունը տալ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթին, քանի որ նախ ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը ավելի վաղ է ուժի մեջ մտել և նաև սահմանում է ֆիզիկական և իրավաբանական անձանց համար բարենպաստ պայմաններ:

3. **Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Ընկերության և Նախարարության ընդերքի գործակալության կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետևում են հետևյալ փաստական հանգամանքները.

1. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի մարտի 7-ի թիվ 01 ԳԲ/ 29.2ԱԱ/1396-19 մերժման գրությունը:

2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ-ի 2019 թվականի հունվարի 24-ի թիվ ԲՓ-5 Պետական փորձաքննական եզրակացությունը:

3. ՀՀ Բնապահպանության նախարարության 2019 թվականի փետրվարի 27-ի թիվ 05/1939 գրությունը:

4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում, գտնում եմ, որ վարչական բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

Սույն բողոքի քննության համար էական եմ համարում հետևյալ հարցադրումներին անդրադառնալը.

1. Արդյո՞ք Նախարարությունը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի բացասական եզրակացության հիման վրա կարող է տրամադրել ընդերքօգտագործման իրավունք, թե ոչ:

2. Արդյո՞ք ժամկետները կարգավորվում են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթներով՝ այն է. «5.Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ համապատասխան փորձաքննական եզրակացություն մինչև 100-օրյա ժամկետում չտրամադրվելու դեպքում այն համարվում է դրական», թե կարգավորում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի նորմերով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է ՀՀ-ում շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության ժամկետները կարգավորող հատուկ նորմեր, մինչդեռ ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը պարունակում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացության տրամադրման ժամկետների հետ կապված ընդհանուր նորմեր, հետևաբար՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի անհրաժեշտ է առաջնորդվել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներով:

Ելնելով վերոնշյալից և ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասով՝, «. Առանց փորձաքննական դրական եզրակացության արգելվում է հիմնադրութային փաստաթղթի ընդունումը կամ նախատեսվող գործունեության իրականացումը», ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2017

թվականի օգոստոսի 23-ի թիվ 104-Ն հրամանը՝ Նախարարությունը մերժում է «ՍՎ ՋՈՒՐ» ՍՊ ընկերության 2019 թվականի ապրիլի 4-ին ներկայացված թիվ 12 վարչական բողոքը:

Վարչական վարույթն իրականացնող հանձնաժողովը վարչական վարույթի նիստերի շրջանակներում լսելով կողմի ներկայացրած դիրքորոշումները, ուսումնասիրելով վարչական վարույթին առնչվող փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը սահմանում է ՀՀ շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության ժամկետները կարգավորող հատուկ նորմեր, մինչդեռ ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը պարունակում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացության տրամադրման ժամկետների հետ կապված ընդհանուր նորմեր, հետևաբար անհրաժեշտ է առաջնորդվել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներով:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ՍՎ ՋՈՒՐ» ՍՊ ընկերության 2019 թվականի ապրիլի 4-ին ներկայացված վարչական բողոքը մերժել՝ Նախարարի 2019 թվականի մարտի 7-ի թիվ 01 ԳԲ/ 29.2ԱԱ/1396-19 գրությամբ «ՍՎ ՋՈՒՐ» ՍՊ ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման մերժման գրությունը թողնել անփոփոխ:
2. Նախարարության իրավաբանական վարչությանը՝ եռօրյա ժամկետում ծանուցել կողմերին վարչական բողոքի մերժման հրամանի վերաբերյալ:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5/10/2019

X

VERIFIED OCSP 5/10/2019 20:16:11 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

ԿԱՏԱՐՈՂ
ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ